

Արձանագրություն N 1

Ք.Երևան

25.04.2025թ.

2025թ. ապրիլի 25-ին տեղի ունեցավ Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթության մանկավարժական խորհրդի 2024-2025 ուստարվա անդրանիկ նիստը՝ քոլեջի տնօրեն Ն.Միքայելյանի նախագահությամբ: Խորհրդի 23 անդամներից 22-ը ներկա էին նիստին, ուսանողական խորհրդից՝ Ա.Առուշանյանը, Տ.Վերդյանը, Լ.Սարգսյանը:

ՇՏՀ ՄՄԿ մանկավարժական խորհրդի նախագահ Ն.Միքայելյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

Օրակարգ

1. ՇՏՀ ՄՄԿ մանկավարժական խորհրդի գործունեության մասին (Ձեկուցող՝ Ն.Միքայելյան)
2. ՇՏՀ ՄՄԿ ուսումնամեթոդական խորհրդի կազմի մասին (Ձեկուցող՝ Ն.Միքայելյան)
3. ՇՏՀ ՄՄԿ 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի մասին (Ձեկուցող Ռ.Գրիգորյան)
4. ՇՏՀ ՄՄԿ ուխտորհրդի կատարած աշխատանքերի մասին (Ձեկուցող ուխտորհրդի նախագահ՝ Յու.Մնացականյան)
5. ՇՏՀ ՄՄԿ կուրսղեկների կատարած աշխատանքների մասին (Ձեկուցող Ա.Հարությունյան)
6. ՇՏՀ ՄՄԿ հավատարմագրման մասին (Ձեկուցող՝ Ն.Միքայելյան)

1. **Լսեցին՝** ՇՏՀ քոլեջի տնօրեն Ն.Միքայելյանը ներկայացրեց ՄՄԿ մանկավարժական խորհրդի կարգը և առաջարկեց առաջադրել մանկավարժական խորհրդի քարտուղարի թեկնածություն: ՄՄԿ մանկավարժական խորհրդի քարտուղարի թեկնածու առաջադրվեց Թամարա Գրիգորյանը, ով միաձայն ընտրվեց քվեարկության արդյունքում:

Որոշեցին՝

1) Ընդունել ի գիտություն ՇՏՀ քոլեջի տնօրեն Ն.Միքայելյանի տեղեկատվությունը մանկավարժական խորհրդի գործունեության մասին:

2) Մանկավարժական խորհրդի քարտուղար ընտրել Թ.Գրիգորյանին:

2. **Լսեցին՝** ՇՏՀ ՄՄԿ ուսումնամեթոդական խորհրդի կազմի մասին: Քոլեջի տնօրեն Ն.Միքայելյանը նշեց, որ կարգի համաձայն ուսումնամեթոդական խորհրդի նախագահը ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալն է՝ Արմանուշ Առաքելյանը, իսկ կազմում կընդգրկվեն ներքոնշյալ դասախոսներն և ուսանողները.

1. Հարությունյան Արևիկ
2. Տիտանյան Մանուշակ
3. Գրիգորյան Թամարա
4. Հարությունյան Կարինե

5. Բաղդասարյան Նոնա
6. Ահարոնյան Վահրամ
7. Բադասյան Զարինե
8. Գալստյան Վլադիմիր
9. Այդինյան Լուսինե
10. Մնացականյան Յուլյա
11. Վերոյան Տատյանա

Որոշեցին՝

Ի գիտություն ընդունել Ն.Միքայելյանի տեղեկատվությունը և հաստատել ուսումնամեթոդական խորհրդի վերոնշյալ կազմը:

3. Լսեցին՝ Ելույթ ունեցավ Թ.Գրիգորյանը: Նա ներկայացրեց 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացը, որը սկսվել է 2025 թվականի հունվարի 27-ին:

Նշեց՝ երկրորդ կիսամյակից վերականգնված և ազատված ուսանողների մասին, ինչպես նաև փորձուսուցումների և քննաշրջանի գրաֆիկների՝ որոնց արդեն ծանոթացել են դասախոսներն ու ուսանողները:

Արտահայտվեցին՝ Պրոռեկտոր Պ.Գասպարյանը առաջարկեց քննությունները կազմակերպել ընթերականների պարտադիր մասնակցությամբ:

Որոշեցին՝

1) Ընդունել Թ.Գրիգորյանի տեղեկատվությունը 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի մասին:

2) Ապահովել ընթերականների մասնակցությունը բոլոր քննություններին:

4. Լսեցին՝ Ուսխորհրդի նախագահ Յու.Մնացականյանը մանրակրկիտ ներկայացրեց կատարված աշխատանքները և առաջադրեց մի շարք առաջարկություններ:

(Առաջարկությունների ցանկը կցվում է):

Արտահայտվեցին՝ Պ.Գասպարյանը, Ա.Հարությունյանը, Ա.Առաքելյանը, Ն.Բաղդասարյանը: Նրանց հետաքրքրում էր ուսանողության մասնակցության թվաքանակը նշված աշխատանքներին, ինչպես նաև ուսանողների բավարարվածությունը դասախոսների դասավանդման մեթոդներից:

Որոշեցին՝

1) Ընդունել ուսխորհրդի նախագահ Յու.Մնացականյանի տեղեկատվությունը կատարված աշխատանքների վերաբերյալ:

2) Աջակցել ուսխորհրդի կողմից կատարված առաջարկությունների իրականացմանը:

5. Լսեցին՝ Կուրսղեկների կատարած աշխատանքների մասին զեկուցեց Արևիկ Հարությունյանը: Նա դժգոհություն արտահայտեց կուրսղեկների կատարած աշխատանքների վերաբերյալ, ավելացնելով, որ հնարավոր տարբերակներ պետք է փնտրել՝ նվազագույնի հասցնելու անհարգելի բացակայությունները: Թույլ են ուսանողների հաղորդակցման հմտությունները, հետևապես անհրաժեշտ է կազմակերպել թրեյնինգներ՝ ուսանողների լեզվական խնդիրները լուծելու համար: Կազմակերպել նաև դասախոսների վերապատրաստում:

Արտահայտվեցին՝ Քոլեջի տնօրեն Ն.Միքայելյանը առաջարկեց կատարել մոնիթորինգ, հանրակացարանի կարիք ունեցող ուսանողների թիվը պարզելու համար: Հանձնարարեց դասախոսներին՝ առաջադեմ ուսանողների հետ աշխատանքներ տանել, հետագայում ըստ առարկաների օլիմպիադաներին մասնակցելու համար:

Որոշեցին՝

1) Ի գիտություն ընդունել Ա.Հարությունյանի տեղեկատվությունը՝ կուրսղեկների կատարած աշխատանքների մասին:

2) Հանձնարարել կուրսղեկներին կատարել հետևողական աշխատանքներ՝ ուսանողների բացակայությունը նվազագույնի հասցնելու համար:

3) Հանձնարարել դասախոսներին՝ առաջադեմ ուսանողներին նախապատրաստել օլիմպիադաներին մասնակցելու համար:

4) Հանձնարարել Ա.Առաքելյանին դասախոսներին վերապատրաստելու համար կատարել համապատասխան աշխատանքներ:

6. Լսեցին՝ Քոլեջի տնօրեն Ն.Միքայելյանը նշեց, որ ՈԱԱԿ ընդունել է դիմում-հայտը և տվել հավատարմագրման համաձայնություն:

Որոշեցին՝

1) Ի գիտություն ընդունել Ն.Միքայելյանի տեղեկատվությունը հավատարմագրման մասին:

2) Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ հետևողական աշխատանքներ տանել հավատարմագրման գործընթացն իրականացնելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի քարտուղար՝



Ն.Միքայելյան

Թ.Գրիգորյան